

ՀՏԴ 343

Քրեական դատավարություն

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Գուրգեն ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Նախագիծ, համագործակցության վարույթ, պաշտպան, պարտադիր, մասնակցություն, դատավարություն, միջնորդություն, մեղադրյալ, ցանկություն, ներգրավում, հայտնել, քննարկում, պաշտպանության իրավունք:

Ключевые слова - Проект, производство о сотрудничестве, защитник, обязательный, участие, судопроизводство, ходатайство, обвиняемый, желание, привлечение, выразить, обсуждение, право на защиту.

Keywords - Project, production cooperation, defender, mandatory, partisipation, procedure, application, accused, desire, bringing, express. discussion, right to protection.

Г.Нерсисян

ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПРАВ ЗАЩИТЫ ОБВИНЯЕМОГО В ПРОЦЕССЕ СОТРУДНИЧЕСТВА

В данной статье была сделана попытка обосновать, что при досудебном соглашении о сотрудничестве, предусмотренном в 56-ой главе проекта уголовно-процессуального кодекса РА, обязанность следственного органа – обеспечивать обязательное присутствие защитника, должно происходить не после предъявления обвиняемым ходатайства, а с момента появления желания его предъявления. По нашему мнению обеспечить реальную и эффективную защиту прав обвиняемого возможно только так.

G.Nersisyan

PROBLEMS ON THE PROTECTION OF THE RIGHTS OF THE ACCUSED IN THE COOPERATION PROCESS

It was substantiated in this article that according to AR Code of Criminal procedure chapter 56 mandatory duty to ensure the participation of the body conducting the criminal proceedings must arise not by the motion of the defendant but from the point when the wish was presented. We think that it is the only way possible to ensure effective and real protection of the rights of the accused.

Սույն հոդվածում փորձ է արվել հիմնավորելու, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 56-րդ գլխում նախատեսված «Համագործակցության վարույթում» պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովելու քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը պետք է ծագի ոչ թե մեղադրյալի կողմից միջնորդություն ներկայացնելու, այլ այն ներկայացնելու ցանկություն հայտնելու պահից: Ըստ մեզ միայն այդ կերպ է հնարավոր ապահովել մեղադրյալի պաշտպանության իրավունքի արդյունավետությունն ու իրական լինելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի /այսուհետ Նախագիծ/ 56-րդ գլուխը սահմանում է «Համագործակցության վարույթի» ծագման հիմքերն ու ընթացակարգը, դրա մասնակիցների՝ վարույթի խնդիրների ու նպատակների իրացման հնարավորությունն ապահովող փոխհարաբերությունները, մինչդատական վարույթի ու դատական քննության առանձնահատկությունները և այլն: Այս ինստիտուտը ՀՀ քրեական արդարադատության համակարգում նորույթ է, որի հիմնական նպատակը կազմակերպված, կոռուպցիոն բնույթի և գաղտնիության պայմաններում կատարվող ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեմ պայքարի նոր մարտավարությամբ նման հանցանքների բացահայտումն ու հանցագործների մերկացումն է:

Ընդհանուր առմամբ այս ինստիտուտը համապատասխանում է արտասահմանյան երկրների համանուն մոդելներ ունեցող ինստիտուտների կարգավորումներին, սակայն Նախագիծը պարունակում է որոշակի թերություններ, որոնք առանձին դեպքերում չեն ապահովում համագործակցության վարույթի մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի

միջնորդությունը /պաշտպանի հետ չքննարկված/ փոստով ուղարկելու, անձամբ կամ միջնորդավորված ներկայացնելու կամ այլ եղանակներով, որից հետո ըստ Նախագծի 461-րդ հոդվածի 4-րդ մասի քննիչը ստանձնում է մեղադրյալին պաշտպանով ապահովելու պարտականություն՝ նրան ընձեռելով միջնորդությունը պաշտպանի հետ քննարկելու հնարավորություն: Սակայն այդպիսի պայմաններում վարույթն իրականացնող մարմինը ստանում է պաշտպանի հետ չքննարկված միջնորդության բովանդակությանը ծանոթանալու հնարավորություն և դրանից ստացված տեղեկատվությունը անուղակիորեն օգտագործելու եղանակով քննիչը կարող է ձևավորել նույն միջնորդությունը դատախազի կողմից հետագայում մերժելու հիմքեր, ինչը պարունակում է մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի ոտնահարման իրական սպառնալիք: Հիշյալ փուլում պաշտպանի մասնակցությունը ենթադրում է վերջինիս կողմից մեղադրյալին դատավարական իրավունքների պարզաբանում և ենթադրյալ համագործակցության վարույթի շրջանակում ստանձնվող պարտականությունների ծավալի կատարման հնարավորության, ինչպես նաև դրա արդյունքում դատախազի կողմից «ընդառաջելու» պաշտպանության կողմի համար ակնկալվող տարբերակների քննարկում²: Դրանից ենթադրվում է, որ պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո մեղադրյալը կարող է նաև հրաժարվել համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու իրավունքից, մինչդեռ այդ դեպքում քննիչը նույնպես կունենա պաշտպան չունեցող մեղադրյալից ստացված միջնորդության բովանդակությունը օգտագործելու իրական հնարավորություն: Նախագծի 120-րդ հոդվածը, որը սահմանում է որպես ապացույց չթույլատրվող նյութերը, չի պարունակում համաձայնագիր կնքելու միջնորդության բովանդակությունից բխող տեղեկատվության /հատկապես այն դեպքում, երբ միջնորդությունը գտնվում է մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից քննարկման կամ դատախազի կողմից ուսումնասիրության փուլում/ օգտագործման անթույլատրելիությունն արձանագրող պահանջ այն դեպքում, երբ մեղադրյալը պաշտպանի հետ քննարկելուց հետո չի պնդում միջնորդությունը կամ հրաժարվում է միջնորդությունից: Ավելին, Նախագիծը չի սահմանում նաև համագործակցության համաձայնագիր կնքելու միջնորդությունը մերժելու, ինչպես նաև մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունները չկատարելու դեպքում նրա կողմից ներկայացված ապացույցների օգտագործման արգելք, ինչպիսի դրույթ նախատեսված է, օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգների դատավարական օրենսդրությամբ: Այսպես, ԱՄՆ դատարաններում քրեական դատավարության դաշնային կանոնների համաձայն (11-րդ կանոն կետ E), եթե մեղադրողի ու մեղադրյալի միջև համագործակցության համաձայնություն ձեռք չի բերվել, ապա մեղադրողը իրավասու չէ օգտագործելու այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել մեղադրյալի կողմից <<մեղքն ընդունելու մասին գործարք>> կնքելու միջնորդության քննարկման ընթացքում: Սա մի երաշխիք է, որն ուղղված է ապահովելու ի թիվս այլոց նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքը և անվտանգությունը:

Պայմանականորեն ընդունենք, որ համաձայնագիր կնքելու միջնորդության մեջ նշվել էր այն անձի անունը, ում հանցավոր դեպքին մասնակցությունը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու պարտականություն էր ստանձնել մեղադրյալը, ինչպես նաև ներկայացրել էր այլ փաստարկներ, որոնք կարող էին միջնորդությունը դատախազի կողմից բավարարելու համար <<ընդունելի>> գնահատվել: Նախքան միջնորդությունը մեղադրյալի կողմից պաշտպանի հետ քննարկելը, քննիչը կստանա տվյալ անձին հարցաքննելու և մյուս փաստարկները ստուգելու իրական հնարավորություն, որի ընթացքում հարցաքննվողը կարող է, օրինակ, հանդես գալ խոստովանությամբ, ներկայացնել ինքնամերկացնող ապացույցներ՝ այդ կերպ սպառելով համագործակցության առարկան, ինչը կչեզոքացնի համագործակցության ցանկություն հայտնած մեղադրյալի կողմից ներկայացված միջնորդությունը դատախազի կողմից բավարարելու հավանականությունը:

Վերը ներկայացվածից ուղղակի բխում է, որ համագործակցելու մտադրություն ունեցող մեղադրյալը պետք է ունենա պաշտպանության իրավունքի իրացման լիարժեք հնարավորություն նախքան համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելը:

լինել քրեադատավարական օրենսդրության առաջադրած պայմաններին կամ ունակ լինել կազմելու դատավարական այդպիսի փաստաթուղթ:

Հետևաբար համագործակցության վարույթի նախաձեռնման փուլում անհրաժեշտ է սահմանել մեղադրյալի իրավունքների իրացման այնպիսի ձևաչափ, որում նրա պաշտպանության և պաշտպանի հետ խորհրդակցելու կամ վերջինիս հետ դիրքորոշումը քննարկելու կամ համաձայնեցնելու հնարավորությունները լինեն իրական ու անխոցելի, պաշտպան ունենալու մեղադրյալի իրավունքը պետք է ծագի նախքան միջնորդություն կազմելը, որը կարող է դիտվել նրա՝ որպես համագործակցության ցանկություն հայտնած դատավարական սուբյեկտի պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման երաշխիք:

Համագործակցության մասին համաձայնագիր կնքելու փուլում պաշտպանի պարտադիր ներգրավման՝ Նախագծով սահմանված կարգավորմանը համահունչ մոտեցում են պարունակում նաև մի շարք այլ պետությունների՝ մասնավորապես Ռուսաստանի դաշնության⁶ և Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերը⁷:

Ներկայացվող խնդիրը բարձրաձայնվում է նաև արտասահմանյան դատավարական օրենսգրքերի շուրջ: Կոնկրետ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգավորման կապակցությամբ որոշ հեղինակներ կարծում են, որ մեղադրյալի կողմից համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու բավարար հիմքերի առկայության դեպքում քննիչը պարտավոր է նրան պարզաբանել անձամբ պաշտպան հրավիրելու կամ պաշտպան նշանակելու միջնորդություն ներկայացնելու իրավունքը⁸, այդ կերպ ստեղծելով նախքան միջնորդություն ներկայացնելը քրեական գործով վարույթին պաշտպան ներգրավելու հնարավորություն:

Մեկ այլ խումբ դատավարագետներ կարծում են, որ համագործակցության վարույթում պաշտպանի մասնակցությունը պետք է պարտադիր ճանաչվի համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու մտադրության ծագման պահից⁹:

Օ.Ա.Տերտըշնայան այն կարծիքին է, որ պաշտպանի մասնակցությունը անհրաժեշտ երաշխիք է մեղադրանքի կողմի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու ցանկություն հայտնած մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար, այն համարվում է մեղադրյալի ազատ կամարտահայտության օրինականության պայման¹⁰: Միջնորդությունը պաշտպանի կողմից ստորագրված լինելու պահանջը ենթադրում է, որ անձը, ով համագործակցելու ցանկություն է արտահայտել, այդ մասին միջնորդությունը պետք է ներկայացնի միայն պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո:

Ե.Լ.Ֆեդոսեևան գտնում է, որ անձը համագործակցելու ցանկություն հայտնելու իրավունք պետք է ունենա մինչդատական վարույթի հենց սկզբնական փուլում, որը կարող է ներկայացվել գրավոր դիմումի տեսքով: Համագործակցելու ցանկությունը կարող է ամրագրվել նաև հարցաքննության ժամանակ, այդ թվում վկայի հարցաքննության, ինչպիսի եղանակը պրակտիկայում հաճախակի է կիրառվում¹¹: Այդ դեպքում համագործակցելու հայտարարությանը դրական արձագանքելու պայմաններում քննիչը տվյալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահից կտրամադրի պաշտպան, ով կապահովվի մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի լիարժեք պաշտպանությունը:

Չնայած խնդրի լուծման վերաբերյալ կարծիքներն ու առաջարկվող ուղիները որոշակիորեն տարբեր են, սակայն դրանք ընդհանրական են հետևյալում՝

ա/ համագործակցելու մտադրություն ունեցող մեղադրյալը պետք է ունենա պաշտպանության իրավունքի իրացման լիարժեք հնարավորություն նախքան համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելը,

բ/ նախքան քննիչի կողմից մեղադրյալի ներկայացրած միջնորդության բովանդակությունից տեղեկատվություն քաղելու հնարավորության ստեղծումը մեղադրյալին պետք է ընձեռնվի այն փաստաբան-պաշտպանի հետ քննարկելու հնարավորություն:

Ըստ մեզ՝ իրավիճակներից զերծ մնալու համար Նախագծում նպատակահարմար է մեղադրյալի պաշտպանության իրավունքն ապահովել միջնորդություն ներկայացնելու առավել

վաղ փուլում՝ մեղադրյալի կողմից համագործակցելու մասին ցանկություն հայտնելու պահից: Այդ պայմաններում կապահովվի մեղադրյալի՝ համագործակցության եղանակների ու նպատակների շուրջ տեղեկատվության գաղտնիությունը՝ նախքան պաշտպանի ներգրավումն ու նրա հետ խորհրդակցելը, բացի դրանից մեղադրյալը ստիպված չի լինի օրենքի տարրը՝ Նախագծի 461-րդ հոդվածով նախատեսված միջնորդության բովանդակությանն առնչվող պայմանները պահպանելու համար անձամբ կազմել միջնորդության <<նախագիծ>> /նախագիծ, որովհետև պաշտպանի հետ քննարկելուց հետո այն կարող է փոփոխվել կամ մեղադրյալը կարող է ընդհանրապես հրաժարվել համագործակցության մտադրությունից/՝ բացառապես պաշտպանի ներգրավման հիմք ապահովելու և նրա հետ միջնորդությունը քննարկելու համար: Այդպիսի կարգավորման պայմաններում, պաշտպանի հետ խորհրդակցելուց և համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու մտադրությունից հրաժարվելու դեպքում մեղադրյալը կստանա նաև նախկինում ունեցած իր մտադրության մասին հարկադիր բարձրաձայնելուց խուսափելու հնարավորություն: Մեր կողմից առաջարկվող տարբերակում պաշտպանի մասնակցությունն ապահովելու քննիչի պարտականությունը պետք է ծագի այն պահից, երբ մեղադրյալը, օրինակ, համագործակցության համաձայնագիր կնքելու ցանկություն պարունակող գրավոր դիմում է ներկայացրել քննիչին կամ այդպիսի հայտարարություն է արվել քննչական գործողության կատարման ժամանակ և որը մտցվել է տվյալ գործողության արձանագրության մեջ: Այսինքն պաշտպանի ներգրավելու համար պետք է բավարար լինի համաձայնագիր կնքելու ցանկության մասին հայտարարությունը, իսկ միջնորդություն կազմելու և այն ներկայացնելու, այդ թվում ներկայացնելուց հրաժարվելու պաշտպանական կողմի գործողությունները պետք է հաջորդեն պաշտպանի ներգրավելու և նրա կողմից մեղադրյալի հետ վերջինիս մտադրությունը քննարկելու փուլին:

Հետևաբար Նախագծի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը անհրաժեշտ է փոփոխել և ներկայացնել հետևյալ ձևակերպմամբ.

«Քրեական վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից մեղադրյալի հրաժարվելը կամ անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե՝

/ ... /:

9) մեղադրյալը համաձայնեցման կամ համագործակցության վարույթ կիրառելու ցանկություն է հայտնել»:

Նախագծի 461-րդ հոդվածի 4-րդ մասը նպատակահարմար է ձևակերպել հետևյալ բովանդակությամբ. «Միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից դատախազին հանձնվում է քննիչի միջոցով: Եթե մեղադրյալը միջնորդություն ներկայացնելու ցանկություն հայտնելու պահին չունի հրավիրված կամ նշանակված պաշտպան, քննիչը միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար և մեղադրյալին հնարավորություն է ընձեռում պաշտպանի հետ խորհրդակցելու և միջնորդությունը քննարկելու համար»:

Օգտագործած գրականություն

¹. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, փաստաթղթի կոդ Կ-084-14.09.2012, 29.11.2013-ՊԲ-010/0, www.parliament.am կայքից:

². М.О.Баев, О роли адвоката-защитника в заключении досудебного соглашения о сотрудничестве с подозреваемым/обвиняемым, Воронежский государственный университет, Вестник ВГУ, 2012, С 373-381:

³. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, 06.12.2015թ. փոփոխություններով հանդերձ:

4. Уголовно-процессуальное право, под общей редакцией Г.И.Загорского, 2010., ст. 16-17.

5. А.Ю.Кирсанов, Досудебное соглашение о сотрудничестве, Анализ, практика, выводы, Закон и право, Москва, 2012, С 43:

